

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարին համար 12 Ֆր.
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտատպանի համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Անկերկայի համար
Տարեկան 3 սյր.
Վեցամսեայ 1.50 »

Ծանուցան սոցր սոս քին երեսին համար 40 ս խկ վերջին երեսի համար 20 անկերկ հ. երե քին անկերկ անկերկերու համար 20 0/0 գեղջ կըր րայի վանուայի համար ձևի 10 անկերկ

ՇԱՐՄՈՒ

Նամակ և գրամ գրկել և արագորութան հասցիին .

Redaction na v'estnik "Sharmy" Varna
R. P. Kalomcarian, Mechitharistengasse journal W. 4. Vienne m" Varna (Bulgarie)

Արտատպանի համար ձևի (20 ՍԱՆԹԻՄ) Պուշկարին համար ձևի (15 ՍԱՆԹԻՄ)
Գրութիւնք և ս չնկ տրեի

ԻՐԱԳԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂՄՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿՐ ՉՐ ՏՐԱՎՈՒԻ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՄՈՒ ՕՐԵՐԸ

ՇԱՐՄՈՒ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆՈՐԸ ՊԵՏՐ Վ ԿԱՆԿԵՆ ԿՁԱՐԷ

ՏԵՆԶՍ

Պ. ԱՍՏՐՈՒՆ

Թըռաւ անի, անուակ քաւիչ քնեւոյ
Գուսրը երկնից, խոպոպն քը ու կեպուեց՝
Տուաւ ծովու մեղմիկ հոյիւն սիրաշունչ,
Եւ կակզ տուա խոնոս՝ գոխուս միջս վեր վ .
Տակը շարշ շապկին կապոյտ ու եկար՝
Հեշտակներու ծրփոն և ճով մ'եր սպիտակ .
Այլիկ խորը ջիւնց ու պաշտօն, կապուսակ
Սիրոյ աննուն երկին քը կար, այն՝ կար .
Չեփիւոյ մեղմ քաւիչ կոնակն օձիկին,
Եւ եւ ծեսայ զոգ արեւներ սարսուղակն .
Վեհ սրշարոյս մը ծագեցաւ հոն կա՞ն էս .
Օեկնից աղջիկն եւ էս, ըսաւ, ո՞վ սարսաւ
Յոյսի գաւակ, ի՞նչ կը տեսնաւ, քեզ ի՞նչ տաւ .
— Ազատութեան, որոսոյի յանկարծ ես .
Վ է Տ Ա .

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԵՐԵՒՈՅԹ

Արդէն մեր ընթերցողներին յայտնի է որ Սօփիայում այսօր արտակարգ դատարանի առջև գատում են նախկին չորս նախարարներ .
Ի հարկէ մենք ի սրտէ ցանկանում ենք որ Բուլղարիայի մէջ նշանաւոր դեր կատարող ու իրենց հայրենիքին ծառայութիւններ մատուցանող նախարարները արդարանան և թարմ ու փոքրիկ Բուլղարիան զժախտութիւնը չունենայ իր պետական մարդկանց պատմութիւնը տեսնելու .
Բայց անկողի չենք համարում մի քանի խօսք տեսնու այս նշա-

նաւոր երեւոյթի մասին, որը իր ծանր տպաւորութիւն թողող կողմի հետ ունի և իր լաւ կողմը իր բարոյական նշանակութիւնը ժողովրդի և բուլղար քաղաքական ու վարչի մարդկանց համար .
Դատում են նախարարներ . մարդիկ, որոնք երբեմն իշխանից յետոյ ամենաբարձր դիրք են ունեցել երկրի վարչութեան մէջ .
Արանք այժմ գատարանի առջև են ներկայանում իբր հասարակ մարդիկ, իրենց անցեալ գործունէութեան համար, որը ալ գային ժողովը երկրի համար վստահար է ճանաչել, հաշիւ տալու և ի թէ իսկապէս մեղաւոր են պատմելու համար .
Կարելի է որ դատարանը ազգային ժողովի մեղադրանքը անհիմն գտնի և արդար հաշակէ, կարող է և հաստատել ազգային ժողովի մեղադրանքը ու պատմել մեղաւորներին .
Մենք ի սրտէ ցանկանում ենք որ ազգային ժողովը սխալված լինի և նախարարները արդար հաշակվեն .
որովհետեւ նախարարներ իրապէս մեղաւոր լինելը պատարանը չէ թէ բուլղար ժողովրդի համար, թէ ֆրասակար է բուլղար պետական մարդկանց վարկի համար .
Իսկ եթէ մեղաւոր են ու իրենց արժանաւոր պատիժը պէտք է կրեն, այդ էլ թեւե ցաւալի, դժբախտ իրողութիւն կը լինի, բայց և այն պէս պէտք է ցոյց տայ Ռուլղարիայի սահմանադրութեան առաւելութիւնները երկրի շահերը պաշտպանելու տեսակետից՝ հանդէպ անխոհմ պետական մարդկանց .
Դատում են նախարարներ, հասկանում էք ընթերցողներ .
Ու շողրութիւն դարձրէք, ոչ թէ ստիական, այլ և եւրոպական մեծ, գեւ հնուց քաղաքակրթ ված երկիրների վրա և օեսէք որ բազմաթիւ նախարարներ տհազակն զեղծումներ են գործել, երկրին ու ժողովրդին ահագին վնասներ են հասցրել, բայց եր-

մէք դատի չեն ներարկվել, մարտի են բողոք իրենց վատ գործերը .
ամենավատ շաքարոտ թիւնն աղամ ներկել է թէ ժողովրդի, թէ պատական իշխանութեան կողմից .
Դերմանիւրի, Ռուսաստանի մէջ և այլ ուրիշ երկրներում, նահանգապետին երկրորդական քաղաքների ոստիկանապետներին, հասարակ պաշտօնեաներին աղամ դատի ներարկելու հնարաւորութիւնը չը կայ .
նրանք կարծես քաղաքացիներ, հասարակ մահկանացուներ չը լինեն, և երկրի օրէնքները պարտ են .
Այսօր փոքրիկ Բուլղարիան, նրա բաւական ուսմանով արական սահմանադրութիւնը գալիս են օրինակ տալու քաղաքակրթ ու խաբէրի որ նախարարներն էլ սոսկ մարդիկ են և կարող են դատի ներարկվել, եթէ իրենց հասարակական գործունէութեան մէջ ի վնաս երկրի շահերին մի քաւ է նկատվում :
ԱՍՏՐՈՒՆ

ԱՆ ԶԵՆՔ ԽԱՖՈՒԻՐ

Դեռ վերջերս էր, երբ շիպուտով մը Վերվարիտի մէկ երկու թիւերը ձեռքս ինկան, որոնցմէ մէկուն մէջ կը տեսնէի Յ-է սինակներէ բաղկացած պաշտպանողական մը, պատ. թուամասնի կողմէ գրուած, սակայն որբեր Ռուսաստանի ու Պարսկաստանի խորշիկն յափշտակող, իրեն պաշտօնակից ու դաւակից ուրիշ պատուելի մը Փրանսեանէ ստորագրուած .
Մեր նպատակը ընաւ այդ երկար երեմիակարին ծայրէ ի ծայր պատասխանել չէ, միայն պիտի ջանանք մէկ քանի կարևոր կէտերը ոչ շարութեան առնել, զորս գեւ նոյն իսկ արտ. սահմանի մէջ ալ անծանօթ մ'ացած են .
Սակէ ժամանակ մը առաջ, երբ պատ. թուամասն խեղճուկ ու սղբերգական պատասխան մը կը գրէր ազոյ դէմ, անշուշտ ընթերցողը կը յիշէ թէ կը համարձակէր ըսել որ ինք այլ ևս ժամանակ չունի և ալ չի՛ զիջանիք անոնցով զբաղելու կամ

անոնց պատասխանելու, բայց այս նոր որբերը դեռ Ֆրանսայի հողերը չը հասած պահուն էր, — յետոյ հանգամանքները փոխուեցան, պատ. թուամասն ջանաց երկրորդ ճիգ մը ընել, գուցէ առաջինէն քաջալերուած, սակայն այս աղամ շատ հաւանական է ծիծաղելիութեւն ալ անգին բան մը ըլլալով, ամենէն ստացաւ մերժողական պատասխան մը, անոնց հետ միասին իր դէմ գտնելով նաև նոր նոր հերքումներ և իրողութիւններ .
Ու ալ ճարահատ, գէթ Պուլոյ մամուլին մէջ իր դէմ տրեւաւ աղմուկն օգուտ քաղելով, ուղած է հոն ինքզինքը պաշտպանել .
նոր ցաւալար պատուելի մը դիմակին ետին պահու բտեւով .
Պաշտպանութիւն ըսելով ընթերցողը թո՛ղ չը կարծէ հոն երբէք հիմնաւոր փաստարանութիւն մը կայ իրեն դէմ եղած այդ քան անհամար ու ճշմարիտ դանդաղները հերքելու համար .
— Ո՛չ, քէ՛ մը անկադրական, սինակ մը բտուա է ներքով սկսող համայնք, առանց պարիկ փաստով մը ապացուցանելու թէ ինչո՞ւ ստատ է, կամ ինչ է իրողութիւնը .
— զոր օրինակ, Բարիկի թղթակիցը այդ երկու պատուելիներու արարքը կը նկատէ շահագործում և խաչագողութեան միջոց մը .
— Ինչ է հիւ՞ճումը .
— ամենք խաչագողներ չենք, ինչո՞ւ չէք .
է՛հ, շատ հաւանական է՝ որովհետեւ կրօնքի առաքելներ են .
Բայց մենք ասանկ միմտութիւններով պիտի չըբաղինք .
մինակ կէտը, որ մեր ուշադրութիւնը կը գրաւէ այդ յօդուածին մէջ, այդ ալ Որիմեան Հայրիկի նկատմամբ եղած կարգ մը դիտողութիւններն են, զորս պատ. թուամասն անպատկառօրէն մէջտեղ կը հանէ, ժողովրդին անոր դէմ ունեցած անպատում սէրէն ու գորովն օգուտ քաղել ջանալով .
Իրենք կը յայտարարեն թէ երբ Որիմեան Հօր ներկայացած են որբեր ժողուելու թոյլտուութեան խնդրելու, ան ամենայն հաճութեամբ ընդունելէ վերջ, փութացած է ամեն ջանք ալ իր կ'զ'ն չը խ'այել, Բայց, կը հարցնենք նախ թէ էջմիածնի հոգեւոր իշխանութիւնը իր թոյլտուութիւնը տուած պահուն արդեօք ընաւ չը՞ փորձո եցու նախկին ազոյ մասին անդեկութիւն ուղի թէ իր չը գիտցածով ալ գոհացաւ .
Իսկ եթէ երբէք հարցումներ ըրաւ, ի՞նչ պատասխան տուաւ պատ. Փրանսեան .
— անչըւշա ստեց, կեղծեց, չաղբորթեց իր սեռն ու տիտղոսին յատուկ ձե-

Երբ որ յետոյ ինչպէս շուն մը, տիրոջմէն ոսկոր մը փրցնելու համար անոր ձեռքերն ու ոտքերը կը լիզէ, կը փայտէ, պատուելին ալ խնայած չէ սյգ վեհափառ հօր, ու կը պարծենայ թէ, անոր հրամանով Ս. Գրային վանքէն Ե հատ տղայ առնելով, ինք ու իրենները սնոր ձեռքը համարելէ և անոր օրհնութիւնները առնելէ վերջ հետացած են Էջմիածնէն:

Ու այս Հայրապետական թուղթը, ինչպէս և մեր անցեալ յօդուածով ցոյց տուած Լոնտոնի մէկ քանի սին-լքայներու շինած դաւադրական նամակը, որն առանց ընդհանուրին համաձայնութեան, ստանց նոյն իսկ քարտուղարին գրտակցութեան շտապած էին Էջմիածին կամ Բարկղ գրել, իրենց կերտած դաւը արդիւնք մը ունենալու համար, իրրու հաստատուն ու զօրաւոր վկայութիւններ կը ներկայացուին ֆրանսական կառավարութեան, ապացուցանելու թէ պատ. Թումանեան ազնիւ ու անմոռելի մէկն է, և թէ առ Ե-Ց ասորիներ մեծ զօհոթութիւններով Լոնտոնի մէկ արուածանին մէջ որբ-ը խոստած ու պաշտանած Գրատարանը շնորհուրտար աստօք, և որքերը յաւանելով աէր Վ. Գոյ. շիպարեանի, կը խնդրէ անկէ ամեն բան հաղորդել հոգեւոր իշխանութեան պետին ու անոր համոզատ շարժիլ:

Հիմա, որ խնդիրը կրօնական գոյն մը և կապակցութիւն մը առնել սկսած է, և մէջտեղ ալ ունինք պատուելիք մը, քիչ մը կանգ պիտի առնեմք հոս, և եթէ ներքին է մէկ երկու հարցումներ ուղղելք պատուելիին: Մի՞թէ պատ. Թումանեան շամշջաւ, չը խոսնեցաւ այն գրիմով ըրած պահանջի մը, կրօնքի մը պետին, երբ ինք ասորին անոր պաշտած ու իր էութիւնը նուիրած ազգին, կրօնքին ու եկեղեցւոյն սրբութիւնը պղծելու յամառ ու վայրագ ջանքեր կընէր, ան ալ դեռ պատանդներու վրայ երբէք զգաց իր վատութիւնը, ստորնութիւնը, իր նկարագրին փտութիւնը, երբ վեհափառ Հայրապետէն իրն որքեր տրուելու թոյլտուութիւնը առնելէն քիչ մը վերջ, հոս կարգ մը հայերու քով, շնական յանդգնութիւնը ունեցած է բացարձակապէս յայտարարելու թէ քանի որ աղայք ըստգրականի հաց կուտեն, պէտք է անոնց օրէնքներուն համակերպին: Առ ըստ իստքով չոր հացով մը մատաղազ հոգիներ ծախու առնել և օտարին գերութեան տալ, մեկնութիւնը այս է: Ու ասկէ աւելին ու ահաբեկի դեռ... իր մօտ եղող նախկին տղաքները Լոնտոնի մէջ մէկ անկիւնը նետելէ վերջ, երբէք խղճի խայթ մը չէ ունեցած Անգլիացի հայապէր ծանօթի մը գրելու թէ, երբ որ իրեն լուսաւորչական տղաքներ ներկայանան կամ գործ խնդրին, ընաւ չը փոքրիկ աւունց ու է օգնութիւն մը ընել, որովհետեւ անոնք բարին ալ ստախոս, ապերախտ, անհնազանդ ու սրիկայ տղաքներ են... ու այս նամակը շարք մը հայերու անտողութիւնէն ալ վրիպած չէ:

Բայց այն ամենը ընել տուողը իր նիւթաւոր հողին է, արծաթին այն հրէշային աննչը, որ պատ մը ու յաւիտենականապէս մոռցնել կուտայ ամեն ինչ:

Պատուելին կը ջանայ ժողովորդը հաւատացնել թէ, նոր որքերը բարորդ վին առողջ ու հանգիստ գրութեան մը մէջ հասած են Բարկղ, և միայն հոն է որ, այժմեան հոգատարու-

թեան ներքեւ սկսած են տակաւ առ տակաւ հրանդանալ: Այս մասին կարծէ նոյն թուրքին սուած խմբապահան ծանօթութիւնը կարողալ, որ ցոյց կուտայ թէ նոյն իսկ ֆրանսացի քովտիրներու կողմէ քննուած և ոտուզուած է թէ աղայք սքանչելի կերպով կը խնամ ին ալ էղնականի հովանաւորութեան ներքեւ: Պատ. Փրանկեանի մէկ ուրիշ մասալներն մէկն ալ իրրե թէ սոյր տղայք կուգին եղբ Լոնտոն երթալ, բայց անոնց հակիրէներ միտելին կապուտցնելու աստիճան ծնծելով կապուտան եղբ հրաժարիլ Լոնտոն երթալ քաղաքաբաժնէն Ստոր մեկնութիւնը ժողովրդին պատուով կը թողուք, իսկ իմէ պատ. Թումանեան իր քովի մ պղատիկ աստեղանները վկայ ցոյց կուտայ, անչուշտ չենք զլանար ընել թէ հին տղոցմէ մէկուն ետեւէն Էջմիածնէն պատուապետ զպատ. եղբներն անյուսալի չէ որ միեւնոյն բաներն ալ առնց բերանը չը դրեն:

Մենք պիտի խնդրէինք պատ. Թումանեանէ որ այլ ևս այդ անտակ ցաւալի փորձեր չընէր հասարակութիւնը խաբելու համար: Իրեն սօզգասէրի փառաւոր տիրոջը բաւական մեծ դրամազուր իրեւան բերաւ, հիմա ալ թող անոնին սպասէ: Մինակ զարմանալի բանը որ կը անանեք այս խնդրին մէջ, ան ալ Լոնտոնը շակն տղաքները այնքան նախատել ու օտարներուն առջեւ այնքան վատահամբաւել վերջ, կրկին անոնց օճիքէն լուծելով զանոնք իր Լոնտոնի փտխաանոցը քաշելն է: Ինչո՞ւ այդ տուակ Երեւանին ծնունդներու համար ժամանակ ու դրամ վատնել չե-տակը քիչ մը առեղծուածալ ին է: Եթէ ոչ միայն զստոնք նոր փարախի մը ծախելու մեկնութիւնով:

Պատ. Թումանեան ասորէն, առու-տուրը չը դադարեցնելու համար, Բարկղէն ընթած մ քողքական աղոց թիւը 9-10 մտեցուցած է, որպէս զի ցուցադրութեան ատեն քիչ չըրեւան և գործը սովորականին պէս յառաջ երթայ, ստանց կրօնասիր:

Այ կը բաւէ որքան որ մեր արիւնը ու մեր գիտելները ծախսելին ու հրճուեցան կրօնքի այդ անզուգական գիշակեր ճիւղները: Այսուհետեւ բացարձակ յիշարութիւն մըն է լոկ որ մը յանձնել պատուելի անունը կրող այս ազգային հնադարեան պատու-հասներուն:

Արդէն, Բարկղէն «Բիւզանդիոն»-ի հասած մէկ թղթակցութիւնէն կերկուր թէ լուր մը կայ որ Պրիմեան Հայրիկ իր հաւանութիւնը տալով որքերու պէջանականի յանձնուածին, խոստացած է մօտ ժամանակէն օրհնութեան կոնդակ մ'ալ ուղարկել: Ինչի՞ւր թէ չուտով ստուգուէր այս ուրախատիթ ուրը:

ՄԵՆՍԻՈՐ
Լոնտոն 31 յունվար

ՄԱԿԵՂՈՆԻՈՑ ԳՈՐԾԵՐԸ
— 0 —

Թուրք կառավարութիւնը թէ և պաշտօնապէս հերքեց իր շօրք հաւաքելը Մակեղոնիոյ մէջ, այնուամենայնիւ եւրոպական թերթերու Պոլսոյ և երկրին մէջ գտնուող թղթակիցները կը հաստատեն որ թուրքիւս կը խորէ ու ծածուկ կը պատրաստուի:

Պուլկարիոյ նախարարացեալ պ. Տանէֆ թէեւ երեսփոխանական ժողովի մէջ տեղի ունեցած հարցապարտումներուն պատասխաններ է որ կառավարութեան ձեռք առած խիստ միջոցները զէպի մակեղոնական կաղմակերպութիւնները ինքնաբերաբար են և չեն կատարուած ու է արատաքին ճնշումի ազդեցութեան տակ, բայց միւս կողմէն ալ եւրոպական թերթերու թղթակիցները կը պնդեն որ Պոլսոյ թուրք շրջանակներու մէջ կապաւոր թէ պուլկար կառավարութիւնը որ ստտիճան արագութեամբ միջոցներ պիտի ձեռք առնու մակեղոնական կոմիտէները կաղմալուծելու համար:

Միւս կողմէն ալ թուրք կառավարութիւնը կաշխատի Բոյնեսբու հետ դաշնակցութիւն մը կը քննարկուի և Պուլկարները զպաւելու համար, ու կտրծես թէ պիտի յաջողի:

Անցեալ օրեր Վիէննայի թերթերէն մին հաղորդեց որ Պորիս Սարաֆօֆ արգէն Մակեղոնիա մտած է և յաջողած է Վիէննայի մէջ գտնուող բժիշկներէն մէկ քանին համաձայնեցնել որ Մակեղոնիա մտնեն հրոս խորմբերուն միանալու համար, որպէս զի պէտք եղած պարագային բժշկական օգնութիւններ հասցնեն:

Պուլկար թերթ մը այդ լուրին տոմիւ կը յայտարարէ որ ճիշդ է թէ հրոսախմբերը փոքրիկ և շարժուն գեղարաններ ունին իրենց հետ, ճիշդ է որ Վիէննայէն երիտասարդ բժիշկներ մըտեր են Մակեղոնիա, բայց ատորը նորաւարա և պուլկար երիտասարդներ են, ոչ թէ վիէննացիներ:

Ատրիանուպոլսոյ նահանգի մէջ ալ սկսեր են հրոսախմբեր երեւան դալ:

Անչուշտ մեր ընթերցողներուն յայտնի է որ Մակեղոնացի յեղափոխականներուն ծրագրի մէջ կայ և այդ նահանգին աղատագրուման խնդիրը: Ուրեմն հոս ալ սկսաւ հրոսախմբային սիւտակ մը:

Պատուելի,

Նարթու մի մէջ գրած պատասխանցող կարգացի:

Գրածդ մինակ իմրնիս պատասխան էր թէ քանի մը անձերու զբոսանք էր թէ արթուն վիճակի մէջ անսնուած երազ առ ալ անոյոջ էր:

Ամէն պարագայի մէջ իմ գրածներու գէժ երբէք հերքում չի գտայ հոն, բայց իմ և ուրիշներու հասցէին ուղղուած անչնորք անական-

ներէ, որոնք սխալ տեղ խրկած են: Գիտէի որ պոստ-քարտը չ'ըննես, բայց չէի գիտեր որ պայտլի խեղաթիւրող մը և մասալի ալ ևս եղեր: Ուրախ եմ որ քու մտայտ ալտաղբութիւնը հրապարակ դրիր: Հիմա ընթերցողը քու չի հաւանած Ակարօրի գրածն ալ քու գրածդ ալ կրնայ լազաւանի:

Բայց, պատուելի, խնդրեմ, քարողը ժողովարանին համար պահելը, զանեղալի նիւթ հայրիւնքներն ալ մէկ կողմ դիր, ամէն բանէ առաջ իրար հասկանալ մէջ մը:

Ինչ ըսած էի ես:
— Ըսի թէ Նարթու մի պատուելին խամրոցը իրրե մատուցութիւնը դարձուց վարձարան — որը քական փորձական դասի հետ չէ խօսքս — գոյութեան իրաւունք չունի, ան ալ Թիւրքի մէջ: Գու եղական հայերէնը ինչ որ ինչակցի մէջ լուծող դրի: Յետոյ քու կոչող գիտողութիւնները և անկախ համոզում, ցոյց տալը էլ, ան հանցի և ուրիշ իրողութիւններ:

Ինձի հետ վիճելի «պաշտօնիդ, սկզբունքիդ» կուզեղ վայելցուր, կուզես մի վայելցնել, հոյս չէ աղ, աս ալ բան որ քու հասկացած կերպով վիճարանելու երբէք մեղադրչեմ — իրողութիւնը ան է որ իմ դերածներէս բան մը չէ հերքուած, զբարձրերս նոյնութեամբ կը մնայ, «գրագրութիւն» ալ է չես կրնար ըսել:

Կը հասկնաս թէ ինչն'ը ըսած ես, ևս չայլում դուն համրէ, պատուելի: Գու, պատուելի, ինձմով և իմ գրածով միայն զբաղելու տեղ, եկր ասոր անոր կից կը զարնես — քու բառովք, զինք մը որ մեր ամենէն աղտոտ հակառակորդները կը գործածեն սեղի դէմ:

Ես Թիւրքի մէջ գոյութիւն ունեցող Նարթու մի պատուելիին վրայ կը խօսիմ, դուն էլ ինչի՞նք բողոքականութեան մասին իմաստասիրութեան քարող կը պահանջես, իր թէ ևս ալ անսուածարանութեան սիր լուծելու բաշխուման ատեն քեզի պէ պատասխար հոն գտնուած ըլլայի:

Ե, հանդէսի վրայ կը խօսիմ, գով եկր կընես թէ՛ օտարին հողին վրայ կը հաւանեք մը արիւնակիրները, վաղը ձեռքերնիդ անցնի աղատ հայաստանը, այս բնթացքը ինչք'ը պիտի չընէք... Ուրիշ՝ ելանք ո՞ր կերթանք, պատուելի, վարձարանի, հանդէսի վրայ կը խօսիք թէ ապագայ հայաստանին մէջ մի ընելիքի վրայ ՁԱԼ կը բանաք:

Ինչ կ'ապ ունի այս խնդրին հետ ուրիշ գօլէճները, ո՞վ բուս որ երգով հայաստանը կ'աղատի, ո՞վ քեզի կարեւորութիւն կուտայ որ քեզի հետ միցի, քեզ հալածէ, ժանտանդ արհեստաւոր մը ինչ պէտք ունի քեզ հալածելու: Իրողութիւններ մատահանելուն մէջ ինչ պէտք ունի քեզի հետ կայ, Լեզուիք տակը բանի մը կայ, բայց կերեւայ չես կրնայ հակցնել: պատուելիական սրտաշարժ խօսքերու երբ ես:

Դեռ թուեմ ըսածներդ, բայց մաս ալ հերքելու ժամանակ չունիմ: Հա՛ մտացայ, տեղ մը սուտ և խօսեր — պատուելիին աշակերտներ 30 է կեր ես 20 է ըս'ը եմ: Մ վրդովիր, պատուելի, տարբերութիւն չես չէ, եւ յետոյ, մէկ-մէկ կու տոց: Ասկան բնգո նախութիւնը պատուելին անոնց տուեր է ու չեմ գիտեր եղբ'...:

Լաւ չէ՞ր ըլլար որ մտաւոր տեղ քանի մը խօսքով պարզէիր քու մտն- կազարթական ուղղութիւնը, մե- թոսդ. ծրարիբոց, դատարաններդ դատարարեցի եւն: Ամենէն կարճ ճամբան աւ էր:

Քանի որ գուցէ իրրեւ պատուելի անտեղի կասկածներու վրայ հիմ- նուած առ ու ան խածղաները ան- խղճութիւն չես նկատեր, ներքին է կարծեմ ինծի ալ կասկածել որ-քու հայրենի կարողութիւնդ գիտնալէս ետքը- առ խրեմախ քարոզները ամ- բողբոյթներ քու գրչէնդ չէ ելած: Կասկած է, ամօք չէ ես:

Քու մատուցող յոնք շտկեմ ըսիր, աչք հանեցիր, աղո որ աչքերէ շօր- պան մըն էր գրածդ, որ փէք ան- համ փախաւ:

Բայց, պատուելի, եթէ քու քա- րոզած բարոյականութենէդ կայ սրե- ախի մը քու քովդ. պէտք է որ ետ առնես ուրիշներու հասցէին զրկած ակնարկութիւններդ: Քեզի գէ՞մ խօ- սողը մէկ անձ է:

Ապրօ

Վերայէ

ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒՆ ԴԱՏԸ

Բ.

Փետրվար Ծին, Ժամը Գին դատա- ւորները մտնելով դատարանը իրենց տեղեր կը գրասեն եւ նախագահը նիստը բացուած կը յայտարարէ:

Որովհետեւ կատարուած թիւեր յան- ձին նշեմտից նախարարի գրամա- կան պահանջ ներկայացուցեր է մե- ղադրեալներուն - քարտուղարը կը կարգայ երեւմտից նախարարին խնդ- րագիրը, որով մեղադրեալներէն կը պահանջուի 2361,905 լէվ 31 սանթ: Նախագահը ա.դ. յայտարարութեան

ԿԱՐՄԻՐ ԱՐՁԱԼՈՅՍԸ

Կոտորածի գիշերն է, Ամեն կողմ կը տիրէ սխ ու կրակի, կարծիր բռ- նակար իւր գահը կ'ամրապնդէ գի- ախներով և կասպիներով, նա լրեն համար ծիրանի կը պատրաստէ ան- մեղներու արիւնով ներկուած, կը ըստին վիրաւորեալներու վաշտաւուն և մեռելներուն հօտաջը՝ իրենց ա- չերը մեխած երկինքին, սպառնալից բողբոջը:

Եւ ընտրութիւնը անսարքեր կը շա- րունակէ իւր գործը, Գիշերուան մեղմիկ հովը, ծառերու սօսափերէն մեռելները կ'օրօրեն լ'իկ, վնասայ ծոցը միշտ կը շարժէ իւր այլքները, անոր շնորհը սակայն ունի իւր մէջ խորին շատ խորին առանց ցաւի մը հառաչը: Երբ անհանգիստ է, երբեմն քանթիւնը կ'ըրնան բարկացում-սպառ- նալից, կուզէ շինել ու յանգել, նա կը զստանայ կը խշխշայ, միշտ ար- թուն միշտ արեւոյ ինչպէս մարդուս միտքը:

Եւ ա.ս. ամենուն անսարքեր, ա- ներկիւղ կանցնի ձխաւ որ մը ծովակին արժով, ձին կը թռչի, փրփրուն ա- րիւն ու քրտինք կտրած ու կը տանի իւր սէլը՝ քուրդը, որ կը սեղմէ իւր կուրծքին հոյ օրթորդին ջնտոր, եւ ձին կը թռչի, քուրդը կ'երազէ յա- վառակուած լ'եր աւարով-Շուշանիկով:

Ընթերցումն վերջը ամեն մէկ մե- ղադրեալին վերաբերեալ կէտերը կրկնելով՝ մեղադրեալներուն կը հարցնէ-ինքզինքնին մեղաւոր կըզ- զան, թէ ոչ, Մեղադրեալները ոչ կը պատասխանեն:

Դատարար աչքամ Ա. Մարէլչը- քով կը յայտարարէ որ թէեւ իրեն պաշտօն տրուած չէ որ մեղադրեալ- ներուն հարցումներ ընէ, այնուամե- նայնիւ հատուցած է որ մեղադրեալ Ռատուլազովի վրայ թիւն պիտի տայ պարզելու այն, ինչ որ իրմէն պի- տի հարցուի: Ռատուլազովի կը պա- տասխանէ որ ինք բացատրութիւն- ներ պիտի տայ իր վերջին խօսքին ասան:

Պարոն Քարէլչըքով կը պատասխա- նէ-ճիշդ է. օրէնքը ձեզի իրաւունք կուտայ չը պատասխանել և ձեր լը- ոտութիւնը մենք ի վնաս ձեզի չենք բացատրեր, բայց ես կը մտածեմ որ ձեզի օգտակար պիտի ըլլայ ձեր տը- ուած բացատրութիւնները: Ալ երբ պիտի խօսիք, կ'իջէ ոչ հոս, պի- տական դատարանին առջեւ, որ վերջին ինստանցիան է:

Պարոն Ռատուլազովի - ես բացատ- րութիւններ պիտի տամ, բայց ոչ այժմ, այլ դատավարութեան մի- ջոցին: Օրէնքը ինծի իրաւունք մը կուտայ եւ ես ալ առ իրաւունքէն կ'օգտուիմ:

Ա. Քարէլչըքով. - դատարանը կը կարծէ որ բացատրութիւնները հի- մակ պիտի տայ, քանի մը խնդիր- ներու մասին, որոնք պարզ չեն:

Ռատուլազովի. - ես հիմակ ոչ մէկ բացատրութիւն կ'ըմամ տայ:

Ա. Քարէլչըքով. - կը մտնեմ թէ կարելի է որ քանի մը գործերու մա- սին բացատրութիւն չէք ուզեր տալ, բայց ձեզի, օրինակի համար, հար- ցեր կուտամ ձեր կուտակուած ծրագրի մասին, կամ նախարարու- թեան որուն անգամ էլիք: Ատանկ հարցերու մասին կարծեմ չը պիտի

մերժէք բաց-տրութիւն տալ, որով- հետեւ դատարանը պէտք է զխնայ թէ ձեր ծրագիրը ինչ սկզբունքներ ունի, անոնք ինչպէ՞ս ըմբռնած է ժողովուրդը եւ ինչպէ՞ս դուք զայն գործադրած էք:

Ռատուլազովի. - քանի որ օրէնքը ինծի բացատրութիւն չը տալու իրա- ւունք կուտայ, ես ալ առ իրա- ւունքէս կ'օգտուիմ:

Պաշտպանող կողմը խօսք կուզէ այդ իրաւարանական հարցի մասին քանի մը բացատրութիւններ տալու համար:

Ռատուլազովի այդ պատասխանէն յետոյ վիճարանութիւն կսկսի փաս- տաբաններուն, դատարանի եւ դա- տաւորին միջեւ: Դատարանը քանի մը կծու խօսքեր կուզէ մեղադր- եալներուն հասցէին, փաստարաննե- րը նոյն ուղղութեամբ պատասխանե- լով դատարանի խօսքերուն, օրի- նաց համաձայն բացատրութիւններ կուտան դատարաններուն: Այդ վի- ճարանութիւնէն վերջը դատարաննե- րը կատանձնանան ու կը վերադառ- նան հետեւեալ որոշումով:

— Զը նախելով որ օրէնքը իրա- ւունք կուտայ մեղադրեալին չը պա- տասխանելու իրեն ուղղուած հար- ցերուն, երբ ինքզինքը անմեղ յայ- տարարած է, այնու ամենայնիւ նախագահը իրաւունք ունի հարցեր տալու կամ սեւէ դատարար անդա- մին արտօնելու որ հարցնէ: Ուստի դատարանի այս որոշումէն յետոյ կը զիմեմ պարոն Ռատուլազովիին կուզէ պատասխանել, թէ ոչ:

Ռատուլազովի. - քանի որ պետա- կան դատարանը այդ խնդրի մասին իջ որոշումը տուաւ, կը բացատրեմ ինչ որ կըրնամ, որովհետեւ գործը շատ բարդ է, եւ շատ բաներ կա- րելի է մտցած ըլլամ: Եւ այդ է պատճառ որ յայտարարեցի ի՞նչ դա- տավարութեան միջոցին բացատրու- թիւններ կուտամ:

Այնուհետեւ դատարանը զանազան

սարերու ազ-տ զաւակը ուրեմն փոք- րոզի էր, թէ ոչ նա ալ կընէր այն ինչ որ ըրած էր քուրդը:

Այս ողով վառուած, խօսեցաւ նա իւր ընկերներուն, վառեց անոնց սիր- տը, բորբոքէց վրիժառուութեան սզին, վճռելով սպիւղ քաջի պէս, մաք- րել իւր արասը կամ մեռնիլ:

Առանց ծամանակ կորսնցունելու լիկան ճարայ որոնելու համար մահ կամ կեանք:

Արշալուսին հասան ծափէր աղօյթի վրաններու մօտ. խումբը կանգ ա- ռու խարխուլ խրճիթի մը քով: Ձե- գայիններու հանած շուկէն խրճիթին մէջէն վախկոտ դողալոր դուրս եկաւ տաս տասներեւո տարեկան մի տղեկ պատասուէն զրեւտով, բողբոջի:

Վարդեան մը յետոյ տղեկը ուրա- խութեանէն թռչելով կը նետուէր Ֆէ- դայիներու գրկին մէջ, անմեղով թէ անոնք կը խօսին իւր մայրենի լե- ցւն աղաղակելով-դուք ֆէդայի էք: Տղեկը որը մէր, կոտորածներու պարգեւը:

Այս պահուս անոնց մօտով արտաւա- անցաւ մի քուրդ ձիւնոր, մատնուած էին: Փոքի իսկ չըրին, ապրիլը կա- րեւորութիւն չուներ, կուրս էր ա- նոնց բաժինը և գուարճութիւնը. այսու ինչոն տղեկին հարց տուաւ թէ կրնայ նա բարձրանալ ծառին վրայ և դիտել չորս գին:

Իսկ որբիկը վրաւորուած իւր Ե-

հարցեր կուտայ Ռատուլազովի. - Գրէ- կովի նախարարութեան որոշումնե- րու, ծրագրի, գիւղական եւ նա- հանգական խորհուրդներու ցրուելու մասին, որոնց լուծման մէջ Ռատու- լազովի կը մեղադրուի իրրեւ սահմա- նադրութեան օրինաց հակառակ գոր- ծող նախարար մը:

Ն. Ռատուլազովի կը պատասխանէ այդ հարցերուն յայտարարելով որ ինք ինչ որ ըրած է, ըրած են եւ ուրիշ գահլիճները: Եւ կը վերջացնէ այսպէս:

— Դուք պիտի տեսնաք որ իմ վար- չութեանս միջոցին խորհուրդներու հաւաքական ցրվում չէ եղած, ինչ- պէս եղած է ուրիշ վարչութիւննե- րու ասան, Միայն արտակարգ պա- րագանելու մէջ է որ խորհուրդ- ները ցրուած են: Վերջը կը բացատ- րենք այդ գործերը:

Ն.

ՓՈՔԻ ԹՂԹԱՏԱՐ

Յիշխակ, 20 յունիս

Ամսոյս 25ի շաբաթ գիշեր քաղաքիս Երզնցիկ-թատր. երկ- սեռ խումբը ներկայացուց ինը պատերազմ - խումբին - հայ ներկայ իրական կեանքէն շատ հրահանգիչ պիէս մը՝ «Արիւնտ հարսնիք»:

Խաղը ընդհանուր կերպով քա- ւական յաջող դուրս եկաւ: Խա- ղին նիւթն մասնաւորապէս խոր տպաւորութիւն լծողուց հասա- րակութեան վրայ:

Թատրոնը ծայրէ ի ծայր լե- ցուն էր:

Հայկական ներկայացումները քաղաքիս հասարակութեան կա- րեւոր մէկ մասին համար սկսած

աստիճանական մէջ, անմեղունակ ը- սաւ:

— Միթէ ես ալ հայ չեմ. ու ան- միջապէս բարձրացաւ ծառին վերեւ:

— Ինչ կը տեսնես, ձայն տուաւ ինչոն վարէն:

— Դէպի ալ կողմը, հինգ ձիւնոր որ կերթան ճամբով սրաքաւ, մօ- տակայ ըրակին վրայ երեք քուրդ հրացանը ձեռքերնին:

Այս միջոցիս դիտակ մ'անցաւ ա- ռանց սակայն դպչելու պղտիկ ֆէդա- յիին. և ինչոն մ. յնեց որ վար իջ- նէ. սակայն նա անտարբեր կը շա- րունակէր մէկ առ մէկ ըսել իւր տե- սածները, գնտակ մը եւս և տղեկը իւր թեւերը բացած, ինկաւ ծառին վերէն. վրաւորուած արդէն...

Հետեւեալ օր արշալուսին, ֆէդայի ընկերներ. հողին կը յանձնէին պղ- տիկ ֆէդայիին մարմինը, Շուշանիկին համարյոներուն տակ...

Անուշաւան

է պահանջ մը դրանս, որ մը որ շատ մխիթարական է

Երգեցիկ թատր. խումբը ա մէն լուրջ ճիգ թափելու է զոն թողելու համար հասարակութիւնը, զերկատարները կարելին ի գործ դնելու են լաւ պատրաստելու, լաւ ուսումնասիրելու իրենց զերը հասարակութեան գէպի հայ ներկայացումը. գէպի հայ ներկայ կեանքը ունեցած հետաքրքրութիւնը լիովին գոհացնելու համար:

Թղթակից

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Թիֆլիզի ներուսեան դպրանոցին պատկանող շէնք մը այրեր է, 32000 ռուպլի փաս պատճառելով դպրանոցին:

— Կիլիկիոյ նորընտիր կաթողիկոս Սահակ եպիսկոպոս կը պատրաստուի Սիս մեկնելու:

— Երևանէն (Կովկաս) Պոլսոյ թերթերէն մէկուն նամակով մը կը հաղորդեն թէ ամեն կողմերէն յաճախ դաւանափոխութեան ձայներ կը լսուին: Օրթոտոքսութիւնը Ապարանի ու նոյն իսկ Էջմիածնի գիւղերուն մէջ հիմ գրած է և ասորի հոգեւորականները իրենց կերած հացը կը բրթեն և հայոց մէջ: Իսկ մեր բարձր հոգեւորականութիւնը անտարբեր կը գտնուի այդ մարգորոնելու հանդէպ:

— Առուստրի վարժարաններու հոգաբարձութիւնը իր շնորհակալութիւնը կը յայտնէ պ. Սարգիս Գուլամեանի, որ իր գտտեր ամուսնութեան աւթիւ 100 ֆրանք նուիրած է իր քաղաքին ազգային վարժարաններուն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ի Ք Ի Ա

Աւստրիական և ռուսական զեռպանները իրենց կառավարութիւններէն հեռագրով հրահանքի կոպասին Բ. Դանէն Մակեդոնիայի բարենորոգումները պահանջելու համար:

— Անգլիական թագաւորը իր գահական ճառին մէջ, և իստրական արտաքին գործոց նախարարին օգնականը իստրիոյ երեսփոխանական ժողովին մէջ յայտարարած են որ երկու պետութիւններն ալ ուշի ուշով կը հետեւին Պալքանի գործերուն և Ռուս ու Աւստրիական կառավարութիւնները Պերլինի գաշնագրութիւնը ստորագրող պետութիւններու համաձայնութեամբ կաշխատին Մակեդոնիայի վիճակը բարելաւելու և անց Սուլթանի իշխանութեան փոս մը հասցնելու:

— Բէքի մօտերը նախանայրները ժողով մը գումարեր են հակառակելու համար Մակեդոնիայի բարենորոգումներուն: Աստիք կ'սպանան Իրէքը գրաւելու:

ՊՈՒԼԿԱՐԻՅ

Պուլկար թերթերը կը հաղորդեն որ մակեդոնական կազմակերպութեան գէմճեք առած միջոցները ռուս կառավարութեան թելադրութեամբ եղած է: — Նախարար պետ պարոն Տանֆ երեսփոխանական ժողովի մէջ յայտարարած է որ քանի մը մակեդոնական գործիչներ դատի պիտի ենթարկուին:

— Երեսփոխանական ժողովի մէջ քանի մը երեսփոխաններ պաշտպանած են կառավարութեան բռնած ընթացքը հանդէպ մակեդոնական կազմակերպութեան, յայտարարելով որ անոնց գոյութիւնը փաստակար է թէ Պուլկարիայի և թէ Մակեդոնիայի համար:

Ա Ն Գ Լ Ի Ա

Թագաւորը գահական ճառով բանալով երեսփոխանական ժողովը իր ճառին մէջ նախ շնորհակալութիւնները բոլոր պետութիւններուն հետ բարեկամական են, ապա անցնելով թրքական գործերուն հետեւեալը ըսեր է. — Թուրքիոյ և ռուսական նահանգներու վիճակը լուրջ երկիւղներ կը պատճառէ: Թագաւորը իր կրցածին շափ աշխատած է Սուլթանին և իր նախարարներուն ըմբռնելու տալու լուրջ և գործնական բարենորոգումներու պահանջը: Ռուս և Աւստրիական կառավարութիւնները նկատի առեր են որ Սուլթանէն բարենորոգումներ պիտի պահանջեն Պերլինի գաշնագրու ստորագրող բոլոր պետութիւնները: Թագաւորը բոլոր թրքական առաջարկութիւնները բաւարար կը համարէ և իր լուր սրտէ պիտի պաշտպանէ այդ առաջարկութիւնները:

Ֆ Ր Ա Ն Ս Ա

«Մաթէն» թերթը կը հաղորդէ որ արտաքին գործոց նախարար Տէլքասսէ խօսակցութեան մը մէջ յայտարարած է թէ Ֆրանսական կառավարութիւնը մեծ եռանդով պիտի պաշտպանէ Աւստրոսլոնական Մակեդոնիայի համար կազմած ծրագիրը, որովհետեւ այդ ծրագիրը կը համապատասխանէ Ֆրանսական առաջարկներուն: Եւ աւելցուցեր է թէ ուրիշ բարենորոգումներ ալ պէտք ըլ-

լան, ինք պատրաստ է աջակցիլ և ամեն բան ընելու մակեդոնացիներուն վիճակը բարելաւելու համար:

Մակեդոնիոյ վիճակը շատ բարդ է ընկալելու զանազանակերպութեան պատճառով: Անկախութիւնը պիտի հաստատուի անիշխանութեան: Ետ փոքրիկ պետութիւններ պիտի բողոքեն թէ իրենց ցեղակիցներուն փոքրիկ կարեւորութիւն տրուի: Այն ժամանակ որու համար պէտք է պատերազմի սկսելու Յոյն-Ռուս պուլկարներուն, թէ քուցով խաւնէրուն: Նախարարը վերջացուցեր է իր խօսքը այսպէս. — Երանաան մեծ հրդեհի տեղէն հեռու գտնուելով, պէտք չէ որ ամխոկով նետէ, այլ ընդհակառակը պէտք է օգնէ անոնց, որոնք կուզեն այդ հրդեհը մարել:

Վ Է Ն Ե Ց Ո Ւ Է Լ Ա

Անտէլ Գարնէժի վէնէցուէլայի պատուիրակ Պօլէնի 360,000 տոլար առաջարկած է Գերմանիոյ պահանջը իսկոյն վճարելու համար: Պօլէն մերժած է յայտարարելով որ շատ մը դրամական հաստատութիւններ փոխ դրամ կառավարկեն վէնէցուէլայի պարտքը մաքրելու համար:

Պաշարումը պաշտօնապէս վերցած է փետրուար երեքին:

— Վէնէցուէլայի նախագահը իր խորին շնորհակալութիւնը յայտնելու Պօլէնի և ամերիկեան գիւտնագէտներուն, ինչ որը յաջողութեամբ կարգադրուելուն համար, յայտարարելով որ վէնէցուէլայն յախտենապէս երախտագէտ պիտի ըլլայ Հիւսիսային Ամերիկայի որը ինքնաբերաբար որոշեց ծառայել արդարութեան:

Մ Ի Ձ Ի Ն Ա Յ Ր Ի Գ Ա

Անգլիացիները գրաւեր են Գանօ քաղաքը, առանց Տեմ դժուարութեան: Ծամբաները հիմակ ազատ են:

Ա Ձ Դ

Յառաջիկայ փետրուար 3 հինգշաբթի գիշեր «Սանդրուլ» սրահին մէջ ինպատ ազգային երկսեռ վարժարանաց տեղի պիտի ունենայ շքեղ պարահանդէս մը (գիմնաստիկ և անդիմակ):

Հոգաբարձութիւնն քաջայայտ է որ դպրոցասէր ազգայինը իրենց պատուարներ ներկայութեամբ պիտի հաճին պատուել սոյն երկկողմը որուն արդիւնքը կը յատկանայ բազմաթիւ աղքատ և ուր մանկանց կրթութեան: Հոգաբարձութիւն Ազգ. երկսեռ վարժարանաց 4 փետրուար 1903 Վանա (Կնիք)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Նոյեմբերի և դեկտեմբերի (902) հրատարակ նետած առանց թուահամարի «Հնչակոններուն շարունակութիւնը» երկը 903 յունուարի «Հնչակոն» ալ, որ առաջիններուն պէս Ա. Գոշպարու 24. Կիւտրոսի Քօստ, Պեխիւսի ու լոնսօն Ս. Է. (Անկիւն) հասցէն կը կրէ, սոսկալի կեղծիք մըն է, յօրինուած՝ ժողովրդին միամիտ տարրը խաբելու համար, Եստրիման, Արդուեան, Զիթճեան և ընկ. կողմէ, որոնք արտաքսուած են Հնչակեան կուսակցութիւնէն:

Կը զգուշացնենք հայ հասարակութիւնը այդ գառնագիտութիւնն անսանձ շահատուկութիւններէն:

Ի դիմաց վառնայի հնչ. մասնաճիւղին

Ատենադպր Զ. Զաւեն Ատենապետ Առիւ Լագարեանց

4/17 փետր. 903

Ծանօթ. — Բուն «Հնչակ» հասցէն է

Մ. Պեխիւս 85, Պեխիւս, Ռիւ, 85

Լոնսօն Անկիւր

Եւ Վաստենէն լոյս պիտի տեսնէ Նոյն

ՅՐԱՆՍԱՅԻ ՆՇԱՆԱԻՈՐ ՎԻՊԱՍԱՆՆԵՐԷՆ Լ Ո Ւ Ի Ն Ո Ւ Ս Ո Ւ

ԱՆԻԾԵԱԼ ՊԱՆԴՈՎԸ

Փերագանցապէս հետաքրքրալարժ Երկրորդ հատորը սկսած հաստատակութիւն

Ամեն դասակարգի զիրարմաշելի ըլլալու համար՝ զիրքը երկու մասով երևան կելլայ (մէկ հատորի մէջ) և ամբողջութիւնը 52-54 թերթերէ պիտի բաղկանայ:

Իւրաքանչիւր մասին բաժանորդագիրն է՝ Վառնայի համար 1,25 և Երևանի քաղաքներու և արտասահմանի 1,50. Իսկ ամբողջութեանը բաժնեգիրն է՝ Վառնայի համար 2,50. և Վառնայէ դուրս 3 ֆր. ձեռքէ առնողները պիտի վճարեն առաջուան պէս՝ 8 երեսնոց պրակին՝ 5 սանդիմ:

Այն քաղաքները և կամ գիւղերը որ մէկէ աւելի բաժանող ունինք, միայն մէկ հասցէի տէր շարաք երկու պրակը մէկ ծրագրով պիտի գրուի. իսկ առանձին բաժանող պրակները 6 հատը մէկ ծրագրով պիտի գրուի փոսթի ծախքը հրատարակչին վրայ է:

Փափագողները պէտք է զիմն հետեւեալ հասցէին՝ **imprimerie Orientale, Onnik Parseghian Varna**

Դրամի փոխարէն նամակագրոջ մ կ'ընդունուի:

Отговорникъ

Мурадъ Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна